

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2009 թվականի մարտի 20-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝

Լիլիթ Ասատրյան	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
Սյուզաննա Մողոմոնյան, Կարեն Զատրյանի լիազոր ներկայացուցիչ	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
Վիկտոր Ենգիբարյան	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
Սասուն Համբարձումյան	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
Արտաշես Դոլունց, Կարինե Մովսիսյանի լիազոր ներկայացուցիչ	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
Պողոս Շահինյան	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
Արման Ոսկանյան	«Տավուշի զարգացման» ՀԿ
Անդրանիկ Վերանյան	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
Ալեքսանդր Տեր-Հովակիմյան	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ

Նիստից բացակայում էին՝

Միհրան Հովհաննիսյան	«Եղվարդ» ՋՕԸ
Հազարապետ Նազարյան	«Եղեգնաձոր» ՋՕԸ
Լիա Խաչատրյան	«Զարգացում և ինտեգրացիա» ՀԿ
Նարինե Մահիյան	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
Շիրակ Միքայելյան	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
Տոնական Ղազարյան	«Շենիկ» ՋՕԸ

Նիստին մասնակցում էին նաև՝

Արա Հովսեփյան	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Արմինե Միմոնյան	Բնապահպանական և սոցիալական հարցերի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Հակոբ Պետրոսյան	Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական
Ռուզաննա Ավագյան	Սախարովի անվ. մարդու իրավունքների կենտրոն ՀԿ
Գոռ Մովսիսյան	Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ, Բնապահպանական դիտորդի լիազոր ներկայացուցիչ
Լուսինե Վարդանյան	Կայուն ջրային միջավայր ՀԿ, Բնապահպանական դիտորդի փոխարինող
Կարինե Դանիելյան	«Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ
Լևոն Բարսեղյան	Ժուռնալիստների «Ապարեզ» ակումբ ՀԿ
Աշոտ Խաչատրյան	«Հայաստան» ամսագիր
Զոհրաբ Շահինյան	«Շահեն» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ:

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր Սասուն Համբարձումյանը:

Նախագահողն առաջարկեց հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը՝

1. 15:00 - Տեղեկատվության ներկայացում Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի մարտի 11-ի խորհրդի նիստի արդյունքների և ՀՄՀ-Հայաստան ծրագրի ներկա կարգավիճակի վերաբերյալ

Ձեկուցող՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյան

2. 15:30 - Տեղեկատվության ներկայացում՝ մարտի 13-ին կայացած ԿԽ նիստի վերաբերյալ

Ձեկուցող՝ ԿԽ անդամ Պողոս Շահինյան

3. 16:00 - Տեղեկատվության ներկայացում բնապահպանական դիտորդի դերի և գործունեության վերաբերյալ 2007-2008թթ. ընթացքում

Ձեկուցող՝ 2007-2008թթ. բնապահպանական դիտորդ Կարինե Դանիելյան

4. 16:30 - Այլ հարցեր

ՇԽ անդամ Ա. Վերանյանն առաջարկեց օրակարգի այլ հարցերում ընդգրկել ՇԽ արտագնա միջոցառումների ակտիվ վերսկսման առաջարկությունը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյանը ներկայացրեց մարտի 11-ի ՀՄԿ խորհրդի նիստի արդյունքները Հայաստանի համար: Նշեց, որ խորհրդի որոշմամբ ՀՄԿ-ն կշարունակի ծրագրի ֆինանսավորումը բոլոր հիմնական բաղադրիչների ուղղությամբ, բացառությամբ գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի: Սակայն հունիսին նախատեսված ՀՄԿ արտահերթ նիստի ընթացքում ևս մեկ անգամ կդիտարկվի ճանապարհների ծրագրի վերսկսման հարցը: ՀՄՀ-Հայաստանը լիահույս է, որ ծրագրի հետագա ֆինանսավորումը կշարունակվի, այնուամենայնիվ, նույնիսկ հակառակ դեպքում, Կառավարման խորհուրդը ի դեմս ՀՀ Վարչապետ Տ. Սարգսյանի հայտնել է պատրաստակամություն հետամուտ լինելու ծրագրի հետագա իրականացմանը՝ հաշվի առնելով ծրագրային նախնական արդյունքները, որոնք շատ դրական են երկրի կայուն զարգացման տեսանկյունից:

ՇԽ անդամները ծավալեցին քննարկում ներկայացված հարցի շուրջ, մասնավորապես, նոր դոնորներ ներգրավելու հնարավորությունները, սկսած շինարարական աշխատանքների անավարտ վիճակը. ի դեպ, այս առիթով Ա. Հովսեփյանը նշեց, որ ցանկացած ՀՄՀ-Հայաստանի շինարարական տեղամաս, որի քանդման աշխատանքներն արվել են, կբերվի ավարտուն կամ առնվազն նախնական վիճակի:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

ԿԽ պատվիրակ Պողոս Շահինյանը ներկայացրեց մարտի 13-ին կայացած ԿԽ նիստին քննարկված հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող 11-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

ա/ Հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,

բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,

գ/ Աշխատանքային պլան,

դ/ Ամփոփ եռամսյակային հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,

ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում պոմպակայանների վերականգնման (IA/CB/CW-08/002) համար իրականացված մրցույթի նախատրակավորման արդյունքների և կարճ ցուցակի քննարկում և հաստատում
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի վարկային ենթաբաղադրիչի շրջանակներում կնքվելիք Վարկային պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում
4. Այլ հարցեր:

ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանը հարցրեց, թե արդյոք ԿԽ-ին ներկայացվել է ԱՄՆ դեսպանի հետ ՇԽ անդամների հանդիպումը, քննարկման հիմնական հարցերը: ԿԽ պատվիրակները պատասխանեցին, որ վերոնշյալ հանդիպման արդյունքները չեն ներկայացվել ԿԽ-ին, քանի որ դեսպանի հետ հանդիպումը եղել է ոչ-ֆորմալ:

Վերոնշյալի վերաբերյալ Ա. Հովսեփյանն առաջարկեց, որպեսզի ԿԽ պատվիրակները առաջիկա ԿԽ նիստին ներկայացնեն ՇԽ գործունեության հիմնական կետերը և միջոցառումները:

ՇԽ անդամները ողջունեցին առաջարկությունը:

ՇԽ անդամ Ա. Վերանյանը հարց բարձրացրեց ԿԽ նիստի արձանագրության մեջ տեղ գտած «շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հողի առգրավման վերաբերյալ տեղեկատվության» մասին և խնդրեց տրամադրել տվյալներ առգրավման ենթակա տարածքների վերաբերյալ: Բնապահպանական և սոցիալական հարցերի ղեկավար Արմինե Սիմոնյանը նշեց, որ գոյություն ունի համապատասխան գործընթաց տարածքների առգրավման համար, որը մշակվել է ՀՄՀ-Հայաստանի Բնապահպանական և սոցիալական գնահատման և վերահսկողության խորհրդատու կազմակերպության կողմից՝ ՀՄԿ-ի ուղեցույցերին, Համաշխարհային բանկի 4.12 քաղաքականությանը և տեղական օրենսդրությանը համապատասխան:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ

ՀՄՀ-Հայաստանի 2007-2008թթ. Բնապահպանական դիտորդ Կարինե Դանիելյանը հանդես եկավ համառոտ ելույթով՝ նկարագրելով իր դերը որպես ծրագրի բնապահպանական դիտորդ անցած ժամանակահատվածի համար: Տիկին Դանիելյանը նախ փաստեց այն հանգամանքը, որ Կառավարման խորհրդում ներկայացրել է ոչ միայն «Հանուն կայուն մարդկային զարգացման» ՀԿ, այլ նաև Հայաստանի Էկոլոգիական դաշինքը և իր պարտքն է համարել ապահովել փոխադարձ կապը՝ բնապահպանական խնդիրների քննարկման և որոշումների կայացման գործընթացում:

Կ. Դանիելյանը կարծում է, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրում բնապահպանական լուրջ խնդիրներ չկան, քանի որ այն ուղղված է գոյություն ունեցող քայքայված ենթակառուցվածքի վերականգնմանը: Սինույն ժամանակ, ՀՄՀ-Հայաստան ծրագրի բնապահպանական դիտորդ հանդիսանալիս, տիկին Դանիելյանը հարկ է համարել նաև անդրադառնալ երկրում առկա բնապահպանական կարևորագույն խնդիրներին և վտանգներին՝ դրանք կապելով ՀՄԿ գնահատման ցուցանիշների հետ:

ՇԽ անդամները քննարկեցին Հայաստանում առկա բնապահպանական խնդիրները:

Վերջում, ՇԽ անդամները իրենց շնորհակալությունը հայտնեցին տիկին Դանիելյանին մատուցած կամավոր աշխատանքի համար և խրախուսեցին առաջիկայում նույնպես ակտիվ հետևել ծրագրի բնապահպանական զարգացումներին՝ համատեղ գործող բնապահպանական դիտորդի և նրա փոխարինողի հետ:

Այլ հարցեր

ՇԽ անդամ Ա. Վերանյանը կարևորեց այն հարցը, որ հատկապես այս շրջանում ՇԽ անդամները պետք է ավելի մեծ թափով վերսկսեն արտագնա հանդիպումների շարքը շահառուների և մարզային ՀԿ-ների հետ՝ բացատրելու ծրագրի կարգավիճակը և խրախուսելու ծրագրի արդյունավետ

իրականացումը տեղերում:

Ա. Վերանյանն առաջարկեց ՇԽ անդամներին առաջ քաշել հանդիպումների իրենց ժամանակացույցերը:

Առաջարկություն եղավ հարցին անդրադառնալ նաև առաջիկա ՇԽ նիստին:

Նիստն ավարտվեց ժամը 17:00-ին:

Նախագահող՝

Ս. Համբարձումյան

Քարտուղար՝

Վ. Գրիգորյանը

20-ը մարտի, 2009թ.